Հաստատում եմ՝

Ռուս-Հայկական համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր Պ.Ավետիսյան

29.12. 2025թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հաստատվել է

Ռուս-Հայկական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի 2025թ.-ի դեկտեմբերի 26-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ն.Ա. Դունամալյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, ավագ դասախոս Ն.Ի. Մարգարյանը, ավագ դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ժամանակակից գիտական օրակարգին: Աշխատանքում ներկայացված են ընտրված թեմայի արդիականությունն ու նշանակությունը՝ ինչպես տեսական, այնպես էլ կիրառական

հարթություններում: Հետազոտությունն աչքի է ընկնում նրանով, որ համադրում է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության վերաբերյալ համաշխարհային մոտեցումների ուսումնասիրությունը հետխորհրդային երկրների զարգացման առանձնահատկությունների վերլուծության հետ՝ հաշվի առնելով դրանց ինստիտուցիոնալ կառուցվածքը, սոցիալ-տնտեսական պայմանները և քաղաքական միջավայրը:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ աշխատանքում առանցքային տեղ է զբաղեցնում Հայաստանի Հանրապետության օրինակը: Դեպքային ուսումնասիրության կիրառումը հնարավորություն է տալիս տեսական դրույթները ստուգարկել ազգային իրողությունների համատեքստում, վերհանել գործող քաղաքականությունների հիմնախնդիրներն ու ներուժը, ինչպես նաև մշակել գործնական ուղղվածություն ունեցող առաջարկներ՝ միտված վերաբաշխիչ գործիքների կատարելագործմանը, պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը և սոցիալ-տնտեսական անհավասարությունների մեղմմանը:

Հետազոտության նպատակը հստակ ձևակերպված է՝ բացահայտել և վերլուծել վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցությունը հետխորհրդային պետությունների սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում՝ ստեղծելով գիտական հենք քաղաքականության գնահատման և կատարելագործման համար: Հետազոտության ընթացքում հեղինակն անհրաժեշտ է համարել պարզել պետական վերաբաշխիչ քաղաքականության էությունն ու իրականացման մեխանիզմները, ուսումնասիրել միջազգային փորձը և զարգացած երկրների մոդելները, ինչպես նաև գնահատել այդ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխհարաբերությունները հետխորհրդային երկրներում, մասնավորապես՝ Հայաստանում:

Այս կերպ պետական վերաբաշխիչ քաղաքականության համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս հստակեցնելու պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները, ձևավորելու կառավարման առավել արդյունավետ մեխանիզմներ և ապահովելու հանրային քաղաքականության համահունչությունը ժամանակակից գլոբալ

և տեղական մարտահրավերներին: Միաժամանակ, հետխորհրդային երկրներում վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության ուսումնասիրությունը նպաստում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացումների խորքային ընկալմանը և կարող է հանդես գալ որպես գործնական հենք պետական կառավարման բարեփոխումների իրականացման, սոցիալական արդարության վրա հիմնված բաշխման համակարգերի ձևավորման և երկարաժամկետ կայուն զարգացման ռազմավարությունների մշակման համար:

Սույն աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայաստանյան հետազոտական դաշտում առաջին անգամ իրականացվել է վերաբաշխիչ քաղաքականության համապարփակ վերլուծություն քաղաքական գիտության տեսանկյունից՝ առաջարկելով նոր, համակարգված մոտեցում: Այն ընդգրկում է վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխհարաբերության համակցված ուսումնասիրություն՝ հաշվի առնելով հետխորհրդային պետությունների սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, բացահայտում է այս քաղաքականության և կառավարման մեխանիզմների փոխկախվածությունը, և առաջարկում գործնական եզրակացություններ ու առաջարկություններ պետական քաղաքականությունների մշակման և հանրային կառավարման բարելավման համար:

Հեղինակն իր աշխատանքում առաջ է քաշում այն վարկածը, որ կառավարման արդյունավետությունն ու վերաբաշխիչ քաղաքականության արդյունավետությունը սերտորեն փոխկապակցված են: Բարձր ինստիտուցիոնալ կարողություններ, թափանցիկություն և հաշվետվողականություն ունեցող պետություններում վերաբաշխման քաղաքականությունը նպատակային է, սոցիալական արդյունքները հավասարակշռված, իսկ անհավասարությունները՝ մեղմ: Թույլ կառավարման պայմաններում նույն քաղաքական գործիքները անարդյունավետ են՝ առաջացնելով ռեսուրսների վատ օգտագործում, կոռուպցիա և հանրային վստահության կորուստ: Հետևաբար, արդյունավետ կառավարումը հանդես է գալիս որպես արդար և կայուն վերաբաշխման համակարգերի ձևավորման առանցքային նախապայման, որոնց հաջող

իրագործումն էլ, իր հերթին, ամրապնդում է կառավարման արդյունավետության ինստիտուցիոնալ հիմքերը:

Ատենախոսությունը նորություն է հայաստանյան քաղաքագիտական հետազոտական դաշտում, քանի որ առաջին անգամ առաջարկում է համալիր և համակարգված ձևակերպում՝ նկատի ունենալով թե՛ քաղաքականության, թե՛ կառավարման արդյունավետության փոխազդեցությունը: Հատուկ կարևորություն ունի համակարգային մոդելի մշակումը, որը ցույց է տալիս, թե ինչպես են այս երկու գործընթացները համատեղ ձևավորում սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշները:

Ատենախոսությունն իր կիրառական կարևորությամբ ևս առանձնանում է՝ առաջարկություններն ուղղված են պետական քաղաքականությունների արդյունավետ մշակմանը, հանրային կառավարման համակարգի բարելավմանը և սոցիալական արդարության ամրապնդմանը, միևնույն ժամանակ նպաստելով տնտեսության կայուն զարգացմանն ու կառավարման ինստիտուցիոնալ հիմքերի ուժեղացմանը:

Ատենախոսությունը հիմնված է համակցված մեթոդաբանական մոտեցման վրա, որը միաժամանակ ընդգրկում է թե՛ որակական, թե՛ քանակական հետազոտական մեթոդներ: Հետազոտության տեսական մասը ընդգրկում է գիտական գրականության վերլուծություն՝ բացահայտելու վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխկապակցվածությունը, ինչպես նաև դրանց սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ ազդեցությունները: Էմպիրիկ ուսումնասիրությունը իրականացվել է դեպքային վերլուծության և համեմատական մեթոդների միջոցով՝ գնահատելու ՏՀԶԿ երկրների և հետխորհրդային տարածքի, մասնավորապես Հայաստանի, պետական կառավարման առանձնահատկությունները և դրանց դերը քաղաքական գործընթացների արդյունավետության ապահովման գործում:

Հետազոտությունն ունի հարուստ գիտական և աղբյուրագիտական հենք. մասնավորապես, օգտագործվել են ատենախոսության թեմային առնչվող ինչպես ակադեմիական գրականություն, այնպես էլ ռազմավարական և հայեցակարգային փաստաթղթերը, օտարերկրյա և հայաստանյան կազմակերպությունների

համացանցային պաշտոնական կայք-էջերում տեղ գտած տեղեկություններն ու տվյալները:

Հետազոտության ընթացքում իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարման արդյունավետության բարելավումը կախված է ոչ միայն ինստիտուցիոնալ բարեփոխումներից, այլև մարդկային ներուժի զարգացման ծրագրերի իրականացման անհրաժեշտությունից: Կառավարման միջազգային չափորոշիչների և լավագույն փորձի տեղայնացված ու ազգային առանձնահատկություններին համապատասխան կիրառումը կարող է ծառայել արդյունավետության բարձրացման կարևոր գործիք: Վերլուծության արդյունքում վերահաստատվում է այն հիմնադրույթը, որ վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության միջև գոյություն ունի անքակտելի, փոխադարձաբար պայմանավորող կապ, որը ոչ միայն ազդում է սոցիալ-տնտեսական գործընթացների վրա, այլև նպաստում է նոր որակի զարգացման մոդելների ձևավորմանը՝ ապահովելով կայուն, արդյունավետ և ինստիտուցիոնալապես ամուր կառավարման համակարգեր:

Հաշվի առնելով իրականացված ուսումնասիրության առավելություններն ու գիտական արժեքը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում առանձնացնել մի շարք դիտողություններ, մասնավորապես.

1. Աշխատանքում օգտագործվում են միաժամանակ տարբեր տեսական դպրոցներին բնորոշ հասկացություններ (օրինակ՝ ինստիտուցիոնալ, նեոինստիտուցիոնալ կամ «good governance» մոտեցումների տարրեր), սակայն հեղինակը չի հստակեցնում՝ որ հայեցակարգն է հանդես գալիս որպես հիմնական: Արդյունքում, օրինակ՝ 1-ին գլխում կառավարման արդյունավետությունը մեկնաբանվում է նորմատիվ տրամաբանությամբ, իսկ 2-րդ գլխում՝ նկարագրողական-ինդեքսային, ինչը ստեղծում է տեսական անհամադրելիություն:
2. Հեղինակը դիմում է միջազգային ինդեքսների (օրինակ՝ Gini, WGI, Government Effectiveness) օգտագործմանը, սակայն չի հիմնավորում դրանց ընտրության չափանիշները և սահմանափակումները տվյալ համատեքստում: Մասնավորապես, չի բացատրվում՝ ինչու է տվյալ ինդեքսը համարվում ադեկվատ

Հայաստանի կամ համադրելի երկրների վերլուծության համար և ինչ մեթոդաբանական խնդիրներ կարող են առաջանալ:

3. Թեև աշխատանքում հայտարարվում է համեմատական մոտեցման կիրառումը, այն հիմնականում սահմանափակվում է նկարագրական համեմատություններով: Օրինակ՝ նույն հարթության վրա են դրվում բարձր եկամտային և անցումային տնտեսություններ ունեցող երկրներ՝ առանց հաշվի առնելու վարչակարգի տարբերությունները կամ քաղաքական պատասխանատվության մեխանիզմները, ինչի արդյունքում համեմատությունը կորցնում է իր բացատրական արժեքը: Իսկ հետևյալ պետությունների՝ Էստոնիա, Վրաստան, Ղազախստան, Ռուսաստան, Ուկրաինա (էջ 139), համեմատությունը հիմնված չէ ընդհանուր հատկանիշի վրա:
4. Աշխատության արժանիքներից է նրա տեսական հագեցվածությունը: Գովելի է այն, որ հեղինակը մեծ ուշադրություն է դարձնում կոնկրետ մեթոդների, ինդեքսների վրա: Միևնույն ժամանակ, մեր կարծիքով, հեղինակը ավելի մեծ ուշադրություն պետք է դարձներ նաև հետխորհրդային պետություններում կոնկրետ գործընթացների վերլուծության վրա: Ընդ որում՝ դրանով իսկ կվերանար ներկայացված անվանման և աշխատանքի բովանդակության միջև առկա որոշակի անհամաչափությունը:
5. Աշխատության 3-րդ գլխում, որը նվիրված է հետխորհրդային պետություններին, ցանկալի կլիներ անդրադառնալ նաև այդ պետությունների հետազոտողների աշխատություններին:

Վերոնշյալ դիտարկումները, սակայն չեն ստվերում աշխատանքի գիտա-ակադեմիական և կիրառական արժեքը: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն հիմնավորված գիտագործնական նշանակություն:

ՌՀՀ քաղաքագիտության ամբիոնը՝ որպես առաջատար կազմակերպություն, գտնում է, որ վերոնշյալ թերությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը, և ***Նարինե Վյաչեսլավի Ասրյանի «Վերաբաշխիչ քաղաքականության և կառավարման արդյունավետության փոխազդեցության գնահատման***

առանձնահատկությունները հետխորհրդային պետություններում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է **ԻԳ.00.02, «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին և այն երաշխավորում է հրապարակային պաշտպանության:

Ռուս-Հայկական համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյան

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ

Ռուս-Հայկական համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ.Կասաբաբովա